ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտ ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2018 թվականի 1-ին եռամսյակում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 11304.2 մլն դրամ՝ պլանավորված 10700.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 5.6 տոկոսով կամ 604.2 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 74.6 տոկոսով կամ 4830.6 մլն դրամով, որից 3925.3 մլն դրամ գումարը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկային եկամուտների աճով:

Մարտ ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4929.1 մլն դրամ՝ պլանավորված 4700.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 4.9 տոկոսով կամ 229.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 77.9 տոկոսով կամ 2159.0 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 132 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 13 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 30 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են շուրջ 42.7 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 24 ստուգում՝ 41.7 մլն դրամ գումարով:

Հաշվետու ամսում «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում արձանագրվել են ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման ու վաճառքի համար նախատեսված ապրանքների չգրանցման 5 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 119 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 71-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 24-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 6-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 4-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 14 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 1 վարչական գործ՝ շուրջ 13.2 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 12 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 20.3 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 131 վարչական գործով սահմանվել է շուրջ 1.6 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 7786 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 7054:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 72 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 12 վարձու աշխատողի՝ 1.5 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 59 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Որոշ ապրանքատեսակների ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառության և շահութահարկով հարկման նպատակով դրանց մատակարարումից ստացվող եկամտի որոշման նպատակով ճշգրտվող տվյալները, այդ տվյալների ճշգրտման առավելագույն սահմանները և ապրանքի միավորի հաշվարկային գնի որոշման կարգը սահմանելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 400 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշները կիրառությունից հանելու և այդ դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումն արգելելու մասին» որոշումների նախագծերը:

Ֆինանսների նախարարի կողմից հաստատվել է «2018 թվականին հարկային մարմնի աշխատակիցների հետ կայանալիք ուսուցումների ծրագիր-ժամանակացույցը»:

Հիպոթեքային վարկավորման ու ՓՄՁ աջակցության ծրագրերով շահառուներին տրամադրված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման, ինչպես նաև պետական բյուջեից եկամտային հարկի վերադարձման նկատմամբ արդյունավետ

վերահսկողության սահմանման նպատակով ԱՀ ֆինանսների նախարարության և Արցախի ներդրումային հիմնադրամի միջև կնքվել է «Համագործակցության մասին» հուշագիր:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը և տրվել առաջարկություններ:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ամսում Արցախ է այցելել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատանքային խումբը: Համաձայն աշխատանքային ծրագրի, ՀՀ գործընկերների կողմից սեմինար-քննարկումներ են անցկացվել ԱՀ ֆինանսների նախարարության կազմակերպական, հսկողական և եկամուտների հաշվառման վարչության, խոշոր հարկ վճարողների վարչության և Ստեփանակերտ քաղաքի հարկային տեսչության աշխատակիցների հետ, ՏՏ ոլորտի մասնագետների կողմից ներկայացվել էլեկտրոնային հարկային հաշիվների դուրս գրման և կուտակային ու սոցիալական վճարների անձնավորված հաշվառման համակարգերի կառուցվածքը, ծրագրային հնարավորությունները, լիազոր մարմինների հետ տեղեկատվության փոխանակման ընթացակարգերը, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունները:

Հաշվետու ամսում նախարարության երեք աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև ընդգրկվել ՀՀ և ՌԴ ֆինանսների նախարարությունների կողմից երկկողմանի համագործակցության միջոցառումների շրջանակներում կազմակերպված «Տրանսֆերային գնագոյացման կանոնների կարգավորման մեխանիզմների մշակումը ՀՀ-ում» թեմայով դասընթացին:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Մարտ ամսում հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով քննվել է մեկ դիմում-գանգատ, որը մասնակիորեն բավարարվել է:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2018 թվականի 1-ին եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 824 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով:

Մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում գործող հարկ վճարողների կողմից փաստաթղթավորման պահանջների պահպանման, իրացման իրական շրջանառությունների, աշխատողների թվաքանակի և աշխատավարձերի ֆոնդերի ճիշտ արտացոլման հետ կապված խնդիրների քննարկման նպատակով ԱՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի ղեկավարությամբ մարտի 30-ին հանդիպում է կազմակերպվել ոլորտի հարկ վճարողների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 322, ելքագրվել՝ 154 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 4 գրություն: